ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հայկ Վալերիի Հարությունյան

ՀԱՐՖԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Ժ.02.02 - «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2018

© National Library of Armenia OCR by Portmind

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ս. Բ. Կարաբեկյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վ. Բ. Կասևիչ
բանասիրական գիտությունների թեկնածու
Ս. Ա. Միքայելյան

Առաջատար կազմակերպություն՝ Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2018 թվականի հունիսի 29-ին, ժամը՝ 15.00-ին, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի՝ Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 0015, ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 15):
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2018 թ. մայիսի 29-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
բ.գ.թ., դոցենտ **Ն. Մ. Սիմոնյան**

© National Library of Armenia

Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

Հետազոտության առարկան և նպատակը

Արաբական լեզվաբանական ավանդույթում լայնորեն կիրառվող եզրույթների համարժեքների սահմանումն արդի լեզվաբանության համընդհանուր ընդունված եզրույթների միջոցով, եղել և մնում է արաբերենի քերականության ուսումնասիրման կարևոր խնդիրներից մեկը:

8-րդ դարում թարգմանական գրականության առաջացումն աստիճանաբար խթանում է գիտությունների զարգացումն Արաբական խալիֆայությունում: Կրթական կենտրոններում հավասարապես ուշադրություն էր դարձվում իսլամի ուսումնասիրությանը, գրականությանը, քերականական ավանդույթին (al-’ulūm al-’arabiyya՝ «արաբական գիտություններ»), թվաբանությանը, աստղագիտությանը, բժշկությանը (al-’ulūm al-’ajamiyya՝ «օտար գիտություններ»): Նոր ձևավորվող արաբական լեզվաբանական ավանդույթի և գրականագիտության կապող օղակն էր արաբական տաղաչափությունը:

Արաբական լեզվաբանության և տաղաչափության մեջ մինչ այժմ կիրառական են բազմաթիվ եզրույթներ, որոնց արմատները հասնում են միջնադար: Ատենախոսության հետազոտման առարկան է այդպիսի եզրույթներից «հարֆը», որն ունի երկու ընկալում: Ըստ առաջին ընկալման՝ հարֆը ինչությային մակարդակի նվազագույն մասնիկ է ինչպես արաբերենի, այնպես էլ արաբատառ գրային համակարգն օգտագործող լեզուների համար: Մեկ այլ կարծիքի համաձայն՝ հարֆ եզրույթը հնաբանություն է, որն անհրաժեշտ է փոխարինել ժամանակակից ընդհանուր լեզվաբանության եզրույթներով: Այս վիճելի հարցը կարևոր է թե՛ տիպաբանական, թե՛ համեմատական լեզվաբանության տեսանկյունից:

Արաբերեն ḥarafa նշանակում է փոփոխել, պտտել ինչ-որ բան: Գրական արաբերենում հարֆ կարող է համարվել՝

- Վերջնական միավոր, որն առանձնանում է բառի գծային անդամատման արդյունքում,
- Վանկաչափական, ձևաբանական ու բառակազմական համակարգերի միավոր,
- Արաբական տեքստի ցանկացած հատույթ, որն օժտված է լեզվաբանական գործառույթով (բառ, ձևույթ),
- Լեզվական միավորների որոշակի խումբ,
- Խոսքի մաս, որը անուն կամ բայ չէ[1]:

Առաջին անգամ եզրույթը հանդիպում է Բասրայի քերականական դպրոցի ներկայացուցիչ ալ-Խալիլ իբն Ահմադ ալ-Ֆարահիդիի (718-791) «Kitāb al-‘Ayn» («‘Այն հարֆի գիրք») բառարանում: Նրան վերագրվող մեկ այլ աշխատությունում՝ «Kitāb al-‘Arūḍ» («Տաղաչափության գիրք»), հարֆը կիրառվում է որպես

[1] Karabekyan S., Yavrumyan M., Harf, part of Encyclopedia of Arabic Language and Linguistics (EALL), vol. 2, 236-239, Leiden 2006, page 236

© National Library of Armenia

վանկաչափական միավոր[2]: Արաբական տաղաչափական համակարգում հարֆն ունի մեկական բաղաձայն և ձայնավոր հնչյուններ[3]:

Հարֆ եզրույթը շարունակում են կիրառել ալ-Խալիլի հետևորդները: Նրա աշակերտ Սիբավեյհին (760-797) հեղինակում է արաբական քերականությանը նվիրված առաջին աշխատությունը, որը հայտնի է որպես «al-Kitāb» (բառացի՝ գիրք)[4]: Աշխատության վերահրատարակված օրինակը բաղկացած է տասը հատորից. հեղինակը մանրամասնորեն սահմանում է արաբերենի խոսքի մասերը, բերում դրանց կիրառությունները, տալիս մասնիկների բացատրությունը[5]:

Բասրացիների ու քուֆացիների աշակերտները նոր դպրոց են հիմնում խալիֆայության մայրաքաղաք Բաղդադում: Բասրայի քերականական դպրոցի վերջին ներկայացուցիչներից ալ-Մուբառռադը (826-898) հեղինակում է «al-Kāmil fi al-Luġa wa al-'Adab» («Լեզվի ու գրականության ընտրանի») աշխատությունը, որտեղ եզրույթը բացատրվում է ժամանակի երկերից բերված օրինակներով[6]:

Ատենախոսության գլխավոր նպատակն է վեր հանել հասկացույթի բովանդակությունը ժամանակակից տեսական լեզվաբանության հասկացական համատեքստում՝ հիմնվելով Ալ-Խալիլ իբն Ահմադի, Սիբավեյհիի և ալ-Մուբառռադի աշխատություններում «հարֆ» միավորի կիրառությունների վերլուծության վրա:

Աշխատանքում ներկայացվող ընդհանուր հարցադրումներն ու խնդիրները

Հետազոտության հիմքում դրված են ստորև ներկայացվող հետևյալ հարցադրումները և խնդիրները:

1. Ուսումնասիրելով արաբական լեզվաբանական ավանդույթի առավել հայտնի աշխատությունները՝ բացահայտել արաբ քերականների տեսակետը հարֆի վերաբերյալ՝ որպես հնչույթաբանական և ձևաբանական միավոր:
2. Ներկայացնելով արաբական միջնադարյան սկզբնաղբյուրներում տեղ գտած դրույթները՝ ցույց տալ դրանց արտացոլումը և կիրառումը արաբական և արտասահմանյան երկրների ժամանակակից լեզվաբանության մեջ:
3. Վերհանելով նշված հեղինակների աշխատություններում հարֆի կիրառման բոլոր դեպքերը՝ վերլուծել, թե հնչույթային ու հնչյունային մակարդակներում որ մասնիկները կարող են համարվել հարֆեր, սահմանել դրանց թիվը և ցույց տալ, թե ինչպիսի դեր են կատարում արաբերենի հնչույթաբանության և ձևաբանության մեջ:
4. Ներկայացնելով պարսկերենի և օսմաներենի տաղաչափական ընդհանրություններն արաբերենի հետ՝ ցույց տալ այդ լեզուներում հարֆի՝ որպես

---

[2] Կարաբեկյան Ս. Բ., Արաբական տաղաչափության հիմունքներ, Երևան 2002, 24 էջ, էջ 2

[3] Фролов Д. В., Классический арабский стих, М. 1991, 359 с., стр. 71

[4] Versteegh K., The Arabic Linguistic Tradition, *Part of the Landmarks in Linguistic Thought series*, vol. 3., London 1997, 206 p., page 55

[5] Fischer W., Zur herkunft des Grammatischen terminus Harf, *Jerusalem Studies of Arabic and Islam*, 1989, 134-145 pp, page 138

[6] Baalbaki R., The Book in the Grammatical Tradition 123-139 pp, *from Grammarians and Grammatical Theory in the Medieval Arabic Tradition,* Oxford Rootledge 2004, 356 p., page 131

© National Library of Armenia

վանկաչափական միավորի դերն ու տեղը, կատարել տիպաբանական վերլուծություն արաբերենի հետ:

5. Նկատի ունենալով աքքադերենի ու հին եբրայերենի քերականական ընդհանրություններն արաբերենի հետ՝ ցույց տալ այդ լեզուների ձևաբանական կառուցվածքը, դրանց հնչույթային ու հնչյունական կազմը, կատարել համեմատական վերլուծություն արաբերենի հետ:

Աշխատանքում ուսումնասիրվող խնդիրների արդիականությունը

Հարֆի մասին երկու տարբեր մոտեցումներ ունենալու հետևանքով առաջացել է եզրույթը սահմանելու խնդիր: Ստացվում է, որ հասկացույթը գործածական է եղել դարեր ի վեր, փոխանցվել սերնդեսերունդ: Ինչպես արաբ, այնպես էլ օտարազգի քերականները տվել են տարբեր ձևակերպումներ՝ հավատարիմ մնալով հարֆի հայեցակարգին:

Լեզվաբանության պատմության պատմահամեմատական և համակարգային-վերլուծական փուլերում ներմուծվել են նոր եզրույթներ և փորձեր են արվել դրանք համապատասխանեցնել բոլոր լեզուներին: Ժամանակակից լեզվաբանների առջև դրվել է քերականական ավանդույթում կիրառվող եզրույթների համարժեքների սահմանման խնդիրը:

Լեզվաբանների մի մասը շարունակում է հավատարիմ մնալ արաբական քերականական ավանդույթի առաջ քաշած դրույթներին, և հարֆը սահմանում է որպես հնչույթաբանական նվազագույնելի անբաժան մասնիկ՝ օժտված կաղապար ձևավորելու հատկությամբ: Հարֆի ներսում, ըստ այդմ, չեն առանձնացվում հարֆի բաղաձայն և ձայնավոր հնչյունները՝ որպես ձևույթ կազմող միավորներ՝ հնչույթներ: Մյուսներն առհասարակ չեն կիրառում հարֆ եզրույթը՝ այն համարելով հնաբանություն: Այդ տեսակետի կողմնակիցները հնչույթաբանական նվազագույն մասնիկի կազմում իրարից տարանջատում են բաղաձայն ու ձայնավոր հնչյունները, դրանք ներկայացնում են որպես առանձին հնչույթներ:

Հարֆն ունի ինչպես հնչույթաբանական, այնպես էլ դրանից բխող վանկաչափական բովանդակություն: Արաբական տաղաչափությունն առաջացել է լեզվաբանական ավանդույթի ծագման արշալույսին: Ստացվում է, որ երեք տարբեր համակարգերի (հունական, արաբական, չինական) գոյությամբ առաջացել են հնչույթային մակարդակի երեք տարբեր միավորներ՝ հնչյունները, հարֆերը և վանկերը: Արդեն հստակորեն ապացուցվել է, որ վանկային լեզուներում հնչյունը չի կարող համարվել հնչույթ, և ձևույթ կազմելու գործառույթը վերագրվում է վանկերին: Իսլամի տարածման արդյունքում ու արաբամուսուլմանական գրականության շնորհիվ հարֆ եզրույթը գործածվում է նաև մի շարք այլ՝ հնդեվրոպական (պարսկերեն, քրդերեն, փաշթո, դարի, ուրդու), ալթայան (ույղուրերեն, նախքան ԽՍՀՄ կազմավորումը՝ Միջին Ասիայի լեզուներ), ավստրոնեզիական (բեգոն, ջավի, սուրաբե) լեզուներում, որոնք գործածում են արաբերենի այբուբենը:

Արաբերենը բազմաթիվ ընդհանրություններ ունի սեմական այլ լեզուների հետ: Մինչ արաբական քերականական ավանդույթի ձևավորումը աքքադերենը, հին եբրայերենը և այլ լեզուներ ունեին հստակորեն ձևավորված լեզվական կաղապարներ: Արաբերենում կաղապարները բաղկացած են հարֆերից՝

© National Library of Armenia

հնչույթային մակարդակի նվազագույն միավորներից: Հարֆը, լինելով բուն արաբական եզրույթ և առաջանալով շատ ավելի ուշ, երբ վերոնշյալ լեզուներն արդեն դուրս էին եկել գործածությունից, բնական է, չէր կարող հանդիպել դրանց լեզվական բառապաշարում: Կաղապարների միջձևութային սահմաններն այստեղ հստակ չեն, քանի որ հարֆերի ներսում բաղաձայն բաղադրիչը մշտապես կայուն է, իսկ ձայնավոր հնչյունը կարող է փոփոխության ենթարկվել: Դա թույլ է տալիս ենթադրել, որ բառի ձևաբանական կառուցվածքի հիմքում երկու բաղադրիչների ագուցումն է՝ որպես մեկ միասնական ձևույթ[7]:

Ուստի, խնդրի արդիականությունը դուրս է գալիս արաբական լեզվաբանության սահմաններից՝ վերաբերելով նաև ընդհանուր լեզվաբանությանը:

Ատենախոսության գիտական նորույթը

Ատենախոսության նորույթն այն է, որ աշխատանքում առաջին անգամ փորձ է արվում **ա)** ալ-Խալիլ իբն Ահմադի, Սիբավեյհիի, ալ-Մուբառռադի աշխատություններից վերհանել և վերլուծել եզրույթի բոլոր կիրառությունները: Թեև տարբեր հեղինակներ քննության են առել նրանց ստեղծագործություններն ու մոտեցումները, բայց ատենախոսության մեջ առաջին անգամ փորձ է արվում համապարփակ վերլուծելու հարֆի հայեցակարգը՝ արաբական քերականական ավանդույթի համատեքստում, **բ)** վերլուծել այն քերականական գործիքակազմը, որը կիրառում են վերոհիշյալ հեղինակներն իրենց աշխատություններում, **գ)** քննության առնել որոշ համանման հարցեր՝ մի կողմից տիպաբանական վերլուծության ենթարկելով վանկաչափական մասնիկները պարսկերենի և օսմաներենի պարագայում, մյուս կողմից՝ համեմատական վերլուծության ենթարկելով աքքադերենի ու հին եբրայերենի ձևաբանական կառուցվածքը:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը

Արաբական լեզվաբանական ավանդույթի համատեքստում միջնադարյան լեզվաբանների գործունեությունը դիտարկելու հիմքը կազմել են հետևյալ սկզբնաղբյուրները՝ «*Kitāb al-ʻAyn*» («Այն հարֆի գիրք») բառարան և «*Kitāb al-ʻArūḍ*» («Տաղաչափության գիրք»), հեղինակ՝ ալ-Խալիլ իբն Ահմադ, արաբական քերականության առաջին ամբողջական աշխատությունը՝ «*al-Kitāb*» (բառացի՝ գիրք[8]) հեղինակ՝ Սիբավեյհի և «*al-Kāmil fī al-Luġa wa al-ʼAdab*» («Լեզվի ու գրականության ընտրանի») աշխատությունը, հեղինակ՝ ալ-Մուբառռադ: Աշխատանքի տեսական գործիքակազմը հիմնվում է Ս. Կարաբեկյանի ու Հ.

---

[7] Карабекян С. Б., Оганесян А. П., Яврумян М. М., Вновь о структуре семитского слова морфонологическая постановка вопроса. Тезисы доклада на XXXVII Международном конгрессе востоковедов. Москва 2004, стр. 3

[8] Ամբողջական անունն է՝ kitāb sībawayhi al-mašhūr fī al-naḥw wa ʼismuhu al-kitāb (كتاب سيبويه المشهور في النحو واسمه الكتاب)՝ *Սիբավեյհիի հայտնի գիրքը քերականության մեջ, որ կոչվում է ալ-քիթաբ:*

© National Library of Armenia

Գաբուչյանի, Դ. Ֆրոլովի, Ի. Ֆիլշտինսկու, Վ. Կասևիչի, Վ. Ռիբալկինի, Ք. Ֆերստեղի, Գ. Վայլի, Ջ. Հյուներգարդի, Դ. Քուլօղլու, Գ. Ջահուկյանի ու Է. Աղայանի և այլոց աշխատություններում ձևավորված մեթոդաբանական մոտեցումների և տեսական դրույթների վրա:

Ատենախոսության գործնական նշանակությունը

Հետազոտության ընթացքում կատարված վերլուծությունն ու քննված հարցերը կարող են հիմք հանդիսանալ ոչ միայն սեմական լեզուների, առաջին հերթին՝ արաբերենի հնչույթաբանության ու ձևաբանության ուսումնասիրության համար, այլև օգտակար լինել արաբական գրային համակարգը գործածող լեզուների տաղաչափական համակարգը հետազոտելու տեսանկյունից:

Ատենախոսության հիմնական դրույթներն ու հարցադրումները կարող են կիրառվել բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ տրամաբանության և քերականության հարաբերակցությանն ու տիպաբանությանն առնչվող դասընթացներում:

Ատենախոսության փորձաքննությունը

Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացվել են «Արաբագիտական ուսումնասիրություններ» (Երևանի պետական համալսարան), «Լրաբեր հասարակական գիտությունների» (ՀՀ ԳԱԱ) և «Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի/ լեզվաբանություն և բանասիրություն» (Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարան) գիտական հոդվածների ժողովածուներում տպագրված հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Ներածության մեջ ներկայացվում են ատենախոսության հիմնական հարցադրումները, հետազոտական խնդիրներն ու նպատակը, տրվում է օգտագործված գրականության համառոտ նկարագիրը, ինչպես նաև հարցի ուսումնասիրման պատմությունը:

Առաջին գլխում՝ *«Հարֆ հասկացույթի հնչույթաբանական բովանդակությունը»,* նկարագրվում է հնչույթի և հնչույթաբանական այլ հասկացությունների կիրառությունն ընդհանուր լեզվաբանության մեջ, ապա նաև, ի շարունակություն դրա, արաբերենի հնչյունական համակարգի առանձնահատկությունները: Արդի լեզվաբանության մեջ հնչույթի սահմանումն ու առաջին կիրառումը կատարել են Կազանի դպրոցում, ապա տեսությունը զարգացել է կառուցվածքային լեզվաբանության տարբեր կենտրոններում, մասնավորապես՝ Պրահայի լեզվաբանական խմբակում: Դրա ներկայացուցիչները, առաջին հերթին՝ Ն.Տրուբեցկոյը, հստակ սահմանել են հնչույթի գործառույթները:

Ինչպես վերը նշվեց, հարֆն ունի հնչույթաբանական և վանկաչափական գործառույթ: Ինչպես ցույց է տվել Վ. Կասևիչը, չին-տիբեթական լեզուներում

© National Library of Armenia

վանկաչափական նվազագույն մասնիկներ են հնչույթաբանական տեսանկյունից անբաժանելի վանկերը[9]: Դա հիմք է տալիս ցույց տալու, որ հնչույթային մակարդակի միավորները, որոնք կոչված են կազմել ձևույթներ, ամենևին պարտադիր չէ, որ հնչյուններ լինեն: Եթե հունական տաղաչափության համակարգի հիմքում վանկաչափական գործառույթն իրականացնում են նվազագույն մասնիկները՝ հնչյունները, չինական տաղաչափության համակարգի հիմքում՝ վանկերը, ուստի կարելի է վստահորեն նշել, որ արաբերենն ունի սեփական տաղաչափական համակարգ, քանի որ ունի հնչույթաբանական այդպիսի կառուցվածք: Դրանք բաղկացած են մեկական բաղաձայն և ձայնավոր հնչյուններից, ընդ որում, միավորի սահմաններում ձայնավորի բացակայությունը հիմք չէ այդ միավորը կցել նախորդ՝ ձայնավոր ունեցող միավորին:

Բաղաձայնները, այսպիսով, հարֆի ներսում անփոփոխ են: Քննության առնելով բաղաձայն հնչյունները՝ պետք է նշել, որ շփականները կարող են լինել ձայնորդներ, ձայնեղ կամ խուլ, իսկ պայթականները՝ ձայնեղ, խուլ կամ շնչեղ խուլ: Հնչյունները, ըստ արտասանության տեղի, լինում են շրթնային, երկշրթնային, շրթնատամնային, առաջնալեզվային, միջնատամնային, լնդերային, քմային (միջնալեզվային), հետնալեզվային, լեզվակային, կոկորդային և հագագային: Տարբերակվում են նաև չորս էմֆատիկ հնչյուններ: Ինչ վերաբերում է [j] և [w] կիսաձայներին, ապա դրանք հայտնի են որպես թույլ հարֆեր, քանի որ, ի հակադրություն վերը նշված բաղաձայնների, կարճ ձայնավոր չկրելու դեպքում դառնում են երկար ձայնավորներ: Այդպիսին է նաև ’alifը՝ «բաղաձայնից զուրկ» կամ զրո բաղաձայն, որը հնչում է որպես ā: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև կոկորդային շփական խուլ հնչյունին, որը կոչվում է «*hamza*» (բառացի՝ օղակ): Այն գոյություն է ունեցել դեռ սեմական նախալեզվում, սակայն նշանը (ء) ներմուծել է ալ-Խալիլ իբն Ահմադը, որը համզան համարել է թույլ հարֆ: Համզան արաբերենի 29-րդ հարֆն է, իսկ նրանք, ովքեր այն առանձին հարֆ չեն համարում, արաբերենի հարֆերի թիվը հասցնում են 28-ի:

Բաղաձայններին և ձայնավորներին արաբական լեզվաբանության մեջ, ի տարբերություն հնդեվրոպական լեզվաբանության, ընդունված չէ վերագրել ձևույթի կազմավորման գործառույթ: Այդ հնչյունների գործառույթը ձևույթի կազմավորման հարցում միջնորդված է. այն սահմանափակվում է հարֆի՝ ձևույթ կազմավորող միավորի ձևավորմամբ: Այսպիսով, հարֆի սահմանի ու դիտարկման մակարդակի նշիչը ձայնավոր հնչյունն է՝ «*ḥaraka*»-ն: Հարֆը ձեռք է բերում ոչ միայն վանկաչափական ու հնչույթաբանական, այլև այդ երկուսից բխող՝ ձևաբանական միավորի գործառություն: Ըստ այդմ՝ ձայնավորը, օժտված չլինելով ձևույթ կազմելու հատկությամբ, առանձին հնչույթ չէ[10]:

---

[9] Касевич В. Б. Фонологические проблемы общего и восточного языкознания, из книги Фонологические проблемы общего и восточного языкознания, Москва 1983, 181-476, стр. 306

[10] Карабекян С. Б., К основаниям арабской морфонологии, Вопросы арабистики, вып. I, Ереван 1996, стр. 3-12, стр. 4

© National Library of Armenia

Արաբ առաջին քերականների աշխատություններում մեկնաբանվում է հարֆի հնչույթաբանական և վանկակաչափական բովանդակությունը: Ալ-Խալիլ իբն Ահմադն իր ապրած ժամանակաշրջանում «հարֆ» բառը կենցաղային իմաստ է ունեցել. նշանակել է ինչ-որ բանի մաս, հատված: Դրա ապացույցն են իր բառարանում տեղ գտած բազմաթիվ օրինակները: Նա հարֆ է անվանել ոչ միայն խոսքի մասերից մեկը, այլև նախադասության մասերը՝ բառերը, բառերի մասերը՝ բաղաձայն-ձայնավոր համակցությունները: Կարելի է եզրակացնել, որ ալ-Խալիլը կիրառել է այդ եզրույթն իբրև բառային կաղապարի բաղկացուցիչ անբաժանելի մասնիկ, ինչով էլ այն տեղ է գտել տաղաչափական համակարգի հիմքում:

Սիբավեյհին հիմնականում տալիս էր ձևակերպումներ, իսկ մնացած դեպքերում պարզապես կիրառում էր այն՝ արդեն առանց բացատրության: Հաճախ եզրույթն օգտագործվում էր ամեն հարֆից առաջ՝ ցույց տալու համար, որ արաբերենի նվազագույն միավորներն այդպես են կոչվում: Կարելի է եզրակացնել, որ հարֆը կոդավորման միավոր է, որը չի կարող հանդես գալ միայն որպես բաղաձայն: Ալ-Մուբառռադը, լինելով Բասրայի քերականական դպրոցի վերջին ներկայացուցիչներից, հավատարիմ էր մնացել նախորդների՝ հարֆ եզրույթի կիրառման սկզբունքին՝ այն սահմանելով որպես վանկակաչափական նվազագույն միավոր: Նորույթ էր նրա մոտեցումը ’alif-ին, որը ցույց է տալիս, որ իր ժամանակ արդեն այն սկսում էր չդիտարկվել որպես առանձին հարֆ: Նա ’alif-ը և hamza-ն դիտարկում էր որպես մեկ հարֆ. եթե ’alif-ը ստանում է որևէ ձայնավոր, ապա կոչվում է hamza, իսկ եթե զուրկ է հարաքայից (ունի սուքուն), չի փոփոխվում և մնում է ’alif: Այլ կերպ ասած՝ ’alif-ը hamza-ի «երկար» տեսակն է, ինչպես wāw-ն ū ձայնավորի, իսկ yā’-ն՝ ī ձայնավորի: ’alif-ի՝ առանձին հարֆ համարողների թիվը նույնպես չպակասեց, և արդյունքում շրջանառությունից դուրս չեկավ 29 հարֆի գաղափարը: ’alif-ի համար իբն Ջիննին (920-1002) նույնիսկ սահմանեց այբբենական անուն՝ lā’: Արաբերենի այբուբենում այդ հարֆը զբաղեցրեց նախավերջին տեղը՝ yā’ հարֆից առաջ՝ իր տեղը զիջելով կոկորդային շփականին:

Առաջին գլուխը եզրափակվում է տիպաբանական վերլուծությամբ՝ հարֆ հասկացույթի բովանդակությունն արաբերենի, պարսկերենի և օսմաներենի տեսական հնչույթաբանության հասկացակազմի համատեքստում:

Երկրորդ գլխում՝ «*Հարֆ հասկացույթի ձևաբանական բովանդակությունը*», տրվում է ձևույթի լեզվաբանական ընկալումների համառոտ ներածական ակնարկ, ապա նաև, ի շարունակություն դրա, ներկայացվում են արաբերենի ձևաբանական համակարգի առանձնահատկությունները: Հարֆը լեզվական որևէ հատույթի կազմավորման վերջնական միավոր է: Վերլուծության ձևաբանական մակարդակում սկզբունքային է դառնում արդեն դիրքի հասկացությունը, քանի որ ձևաբանական միավորների արտաքին տեսքը ներկայանում է դիրքային կառուցվածքի ձևով: Արմատը բաղկացած է հիմնականում երեք հարֆերից, ընդ որում հարֆն ինքնին դիտվում է որպես ամբողջական, բաղադրիչների չբաժանվող միավորում, որպես նկարագրման տվյալ մակարդակի նվազագույն հատույթ (միավոր): Հարֆերի միջև սահմանները խիստ անորոշ են՝ դրանց ապահնչյունավորման միջոցով:

© National Library of Armenia

Արմատական երեք հարֆերի և բառային կաղապարի համադրման արդյունք են բառերը:

Արմատական երեք հարֆերից կազմված է պարզագույն կաղապարը՝ անցյալ ժամանակով դրված բայի ներգործական սեռի երրորդ դեմքի եզակի թիվը: Այն հանդես էր գալիս առաջին և վերջին հարֆերի անփոփոխ a հարաքայով, իսկ երկրորդ հարֆը կարող էր կրել կամայական ձայնավոր: Գոյություն ունի «բայանուն» (արաբերեն՝ maṣdar՝ «աղբյուր») հասկացությունը, որտեղ կարող են լինել ինչպես արմատական, այնպես էլ հավելյալ հարֆեր[11]: Դրանք արաբագիտության արևմտյան դպրոցների լեզվաբանները համարում են ածանցներ: Վերը նշվեց, որ ածանցը երկրորդական ձևույթ է, որը պետք է ունենա իմաստ: Եթե կցական լեզուներում ածանցներով է կատարվում բառակազմությունը, յուրաքանչյուր ածանց իմաստ է ունենում, ապա արաբերենում պատկերն այլ է: Եգիպտացի լեզվաբան Թամամ Հասանն իր «*Manāhij al-Baḥṯ al-Luġa*» աշխատությունում, նկարագրել է «ձևույթի» (մորֆեմա՝ مورفيم) դերն արաբական լեզվաբանության մեջ: Բերելով օրինակներ՝ նա ցույց է տալիս, որ հաճախ են համընկնումները տարբեր կաղապարների հետ: Հետևաբար, կաղապարի ներսում արմատից դուրս գտնվող հարֆերը ածանց դիտվել չեն կարող, քանի որ առանձին իմաստ չեն կրում և կաղապարի մաս են կազմում: Լեզվաբանների կարծիքը համընկնում է որոշյալ հոդի հարցում, որը սահմանվում է որպես նախածանց: Արաբերենում կա հստակ արտահայտված վերջածանց, որն ավելացվում է կաղապարի վերջում և կարող է ներկայացված լինել մեկ հարֆով:

Արաբագիտության մեջ եղել են տարբեր տերմիններ ներմուծելու փորձեր: Այդպիսին է, օրինակ, Ռեֆորմատսկու ներմուծած *transfixus* (տարածանց) հասկացությունը՝ մեկից ավելի հնչույթներից բաղկացած միջածանց, որ հայտնվում է հիմնական ձևույթի ներսում: Անհրաժեշտ է հավելել, որ այստեղ խոսքը վերաբերում է ոչ թե հարֆերին, այլ հարաքաներին, որոնց փոփոխությունը հանգեցնում է հիմքի կաղապարի ինքնության կորստին: Վերը բերված օրինակներում, որտեղ քննվում էին ներգործական սեռի բայեր, ակնհայտ էր, որ դրանք մեկ կաղապարի ենթաձևույթներ են: Սակայն Ռեֆորմատսկին նշում է, որ այստեղ կա հիմնական ձևույթ, և մնացածները դրա ձևակերներն են: Ձևակ է համարվել նաև կրավորական սեռի բայը: Մինչդեռ հարֆի մասին պատկերացումները առաջացել են հենց ի հակադրություն այդ մոտեցման: Ալժիրցի լեզվաբան ալ-Տեյիբ Ատավին հարաքաների մասին իր հոդվածում նշել է, որ ձայնավորների փոփոխությունը հանգեցնում է կաղապարի իմաստային փոփոխությանը, սակայն ինքնին ձայնավորը հնչույթի գործառույթ չունի: Հարֆի կազմում հարաքան կարող է ունենալ հնչույթաբանական մասնիկի գործառույթ՝ միմիայն բաղաձայնի հետ: Հարաքային ձևույթի հատկություն չի վերագրել նաև լիբանանցի Էմիլ Յակուբը:

[11] «Maṣdar» հասկացույթը նույնպես ներմուծվել է արաբական լեզվաբանական ավանդույթ դրա ձևավորման արշալույսին. Բասրայի քերականական դպրոցի ներկայացուցիչները հենց maṣdar-ն էին համարում բառի արմատը, մինչդեռ քուֆացիները գտնում էին, որ արմատը վերոնշյալ բայն է, քանի որ այն զուրկ է որևէ այլ հարֆից:

© National Library of Armenia

Այս բաժնում նկարագրվում են արաբերենի խոսքի երեք մասերը՝ անունները, բայերը և մասնիկները, քանի որ անհրաժեշտ է ցույց տալ, թե հատկապես որտեղ է առավել ցայտուն երևում արաբերենի թեքական կառուցվածքը, որից հետո դյուրին կդառնա հստակեցնել հարֆի դերը ձևույթի կազմում: Մասնիկների հարցում, խուսափելով բառերի շարահյուսական հարաբերություններից, բերվում են միայն այն մասնիկների օրինակները, որոնք ստացել են «հարֆ» անունը:

Հարֆի ձևաբանական բովանդակությունը դարձյալ մեկնաբանվել է արաբ առաջին քերականների վերոհիշյալ աշխատություններում: Ալ-Խալիլ իբն Ահմադի աշխատությունն ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ հարֆը բառի կազմում շարունակում է կատարել ձևույթ կազմելու իր դերը, երբեմն նույնիսկ՝ հարֆը կարող է համապատասխանել ձևույթին, երբ վերջինս կազմված է լինում միայն մեկ հարֆից: Խոսքի մասերի մեջ կան միահարֆ ձևույթ-բառեր և բազմահարֆ բառեր: Քանի որ դրանք իրենց քերականական կառուցվածքով նման չէին անուններին և բայերին, ուստի առանձնացվեցին որպես խոսքի այլ մաս՝ նախադասության մեջ առանձին հատույթ լինելու հետևանքով:

Կարելի է նկատել, որ Սիբավեյհին առավել մանրամասնորեն ու հետևողական է բացատրել քերականական կանոնները, քան իր ուսուցիչ ալ-Խալիլը. ցուցադրված են օրինակներ, կան ամբողջական բացատրություններ: Ալ-Մուբառռադը ևս հստակ ձևակերպում չի տվել «հարֆ» եզրույթին: Փոխարենը հանդիպում են եզրույթի կիրառության դեպքեր, որոնք թույլ են տալիս կատարելու համապատասխան եզրահանգումներ՝ այն համեմատելով արդի լեզվաբանության եզրույթների հետ:

Հարֆ հասկացույթի բովանդակությունը համեմատական վերլուծության է ենթարկվել նաև սեմական ձևաբանության հասկացակազմի համատեքստում: Աքքադերենի և հին եբրայերենի ձևաբանության օրինակով ակնհայտ դարձավ, որ բառակազմական կաղապարը սեմական լեզուներում մեկ ձևույթ է, բաղկացած հնչույթաբանական նվազագույն մասնիկներից՝ արմատական և հավելյալ հարֆերից, և դրա ներսում արմատ և ածանց չի առանձնացվում:

© National Library of Armenia

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազոտության ընթացքում արված դիտարկումները հնարավոր է ամփոփել հետևյալ եզրափակիչ դրույթներում.

1. Հարֆը՝ որպես եզրույթ, ունի տարբեր իմաստներ, որոնց հիմքերը հասնում են արաբական քերականության առաջացման և լեզվաբանական ավանդույթի ձևավորման շրջան: Հետազոտվող ժամանակահատվածում հարֆը գործածվել է «ինչ-որ առարկայի մաս» իմաստով, ինչը ցույց են տալիս եզրույթի կենցաղային կիրառությունները: Այնուհետև այն ներմուծվել է լեզվական բառապաշար. հարֆը կարող է լինել մաս՝ խոսքի մաս, նախադասության մաս՝ բառ, բառի մաս՝ ձևույթ, ձևույթի մաս՝ հնչույթային մակարդակի նվազագույն միավոր:
2. Արդի լեզվաբանության մեջ կան պնդումներ, որոնք միտում ունեն հարֆից առանձին դիտարկել բաղաձայն և ձայնավոր հնչյունները՝ որպես ինքնուրույն հնչույթներ: Սակայն արաբերենում հնչույթային մակարդակի նվազագույն միավորը հարֆն է, որը կարող է ձևավորել լեզվի նվազագույն իմաստակիր մասնիկը՝ ձևույթը (կաղապար կամ ածանցներ): Ուստի, կարելի է ընդունել բոլոր լեզուների համար կիրառելի եզրույթներ՝ միաժամանակ նշելով տվյալ ավանդույթի եզրույթը:
3. Ըստ Ալ-Խալիլ իբն Ահմադի, որը ներմուծել էր հարֆն արաբական լեզվաբանական ավանդույթ, ʾalif-ը և hamza-ն երկուսն էլ արաբերենի թույլ կամ թերի հարֆեր են, միմյանցից անկախ միավորներ, որոնք հանդես են գալիս որպես արաբերենի ձևահնչույթային և վանկաչափական համակարգի մասնիկներ: Երբեմն ոչ միայն այդ երկուսը, այլև արաբերենի ևս երկու թույլ հարֆեր՝ wāw և yāʾ, կարող են փոխարինվել մեկը մյուսով: Հետագա հեղինակները հաստատում են hamza-ի՝ հարֆ լինելը, որով հարֆերի թիվը հասցվում է 29-ի: Առանձնացնելով յոթ բառեր, որոնք դիրքի փոփոխության ընթացքում փոխում են ոչ միայն բառավերջի մեկ, այլև երկու հարֆերը, հեղինակը ցույց է տվել, որ խնդրո առարկան եղել է ոչ թե հարֆը՝ որպես մեկ բաղաձայն հնչյուն, այլ մեկ ամբողջություն: Ստացվում է, որ միայն ձայնավորի փոփոխությունը չի դիտարկվել որպես առանձին երևույթ. եթե փոփոխվում է ձայնավոր հնչյունը՝ լինելով հարֆի մաս, ապա դա համարվում է, որ փոխվում է ամբողջ մասնիկը:
4. Շարունակելով ուսուցչի՝ ալ-Խալիլ իբն Ահմադի գործը՝ Սիբավեյհին նույնպես բացատրում է հարֆ եզրույթը որպես բառի մասնիկ՝ մեկ ձայնավորից ու մեկ բաղաձայնից բաղկացած: Ըստ երևույթին, դա իր մեջ կարող է պարունակել նաև զրոյական բաղաձայն կամ զրոյական ձայնավոր, այսինքն՝ դրանցից մեկի բացակայությունը պատճառաբանվում է որպես դրա զրոյական գոյություն՝ պահպանելով հարֆը:
5. Ալ-Մուբառռադը նույնպես հստակ ձևակերպում չի տվել «հարֆ» եզրույթին: Փոխարենը այս կամ այն օրինակում հանդիպում է դրա կիրառությունը: Ըստ այդ օրինակների՝ կարելի է տեսնել, որ հարֆը բաղկացած է երկու հնչյունից՝ բաղաձայն և ձայնավոր: Դա հակասում է հարֆի ձևակերպմանը՝ թե՛ որպես

© National Library of Armenia

մեկ տառի, թե՛ որպես վանկի, քանի որ վերջինիս կազմ կմտնի նաև զրոյական ձայնավոր ունեցող հարֆը: Վանկում կստացվի 2 հարֆ, հետևաբար վանկ և հարֆ եզրույթները համարժեք չեն:

6. Ձևաբանության տեսանկյունից առավել հստակ ձևակերպում է հանդիպում ալ-Մուբառռադի աշխատությունում՝ կապված արմատական հարֆերի հետ: Արմատի կազմում երկու՝ միջին ու վերջին հարֆերը կարող են կրկնվել, և եթե դրանցից առաջինն ունենում էր զրոյական ձայնավոր, ապա երկու հարֆը գրվում էին միասին՝ որպես մեկ հարֆ, վրան դրվում էր համապատասխան նշան՝ šadda: Հետազոտության ընթացքում պարզ դարձավ, որ եթե ալ-Խալիլը սա բացատրում էր որպես մեկ հարֆ, ապա Ալ-Մուբառռադն առաջինն էր, որ դրան տվեց ավելի ճշգրիտ բացատրություն՝ այն ներկայացնելով որպես երկու հարֆի համադրություն: Քիչ չեն դեպքերը, երբ ալ-Մուբառռադը գործածել էր եզրույթը որպես բառ՝ նախադասության նվազագույն միավոր:

Պարսկերենի և օսմաներենի տաղաչափության տիպաբանական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հարֆ հասկացությունը, լինելով բուն արաբական եզրույթ, դարձել է նաև այդ երկու՝ ոչ սեմական լեզուների վանկաչափական նվազագույն մասնիկը՝ բաղկացած երկու՝ բաղաձայն և ձայնավոր հնչյուններից: Հետևաբար, հարֆը չի կարող ձևակերպվել որպես հնչյուն: Մյուս կողմից, վանկի ներսում կարող են լինել մեկից ավելի հարֆեր, այդ թվում՝ զրոյական ձայնավոր ունեցող մասնիկը, ուստի ճիշտ չի լինի նաև հարֆի՝ որպես վանկի ձևակերպումը: Ըստ այդմ՝ հնչույթային և վանկային մակարդակների նվազագույն միավորը հարֆն է՝ բաղաձայնի ու ձայնավորի *անբաժանելի* միություն, քանի որ փաստացի հարֆն է այս ամբողջ համակարգի հիմքում:

Աքքադերենի և հին եբրայերենի համեմատական հետազոտությունը ցույց է տալիս, որ այդ լեզուներում նույնպես կաղապարները կազմված էին մեկ բաղաձայն և մեկ ձայնավոր հնչյուններ ունեցող հատույթից, որտեղ դրանք միասնաբար հանդես են գալիս ձևույթի կազմում: Այս մոտեցումն ակնհայտ էր նույնիսկ այն ժամանակ, երբ դեռ «հարֆ» եզրույթը չէր առաջացել, սակայն ձևաբանության ասպարեզում բազմաթիվ էին քերականական ընդհանրությունները:

© National Library of Armenia

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. ՀԱՐՖԸ ՈՐՊԵՍ ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍՆԻԿ ՍԻԲԱՎԵՅՀԻ «ՔԻԹԱԲ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ, Բանբեր Երևանի լեզվաբանական համալսարանի, № 1 (40), 2017, էջ 343-346:
2. ՀԱՐՖԸ ՈՐՊԵՍ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍՆԻԿ ՍԻԲԱՎԵՅՀԻ «ՔԻԹԱԲ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ, Բանբեր Երևանի լեզվաբանական համալսարանի, № 1 (40), 2017 էջ, 347-353:
3. ՀԱՐՖԸ ՈՐՊԵՍ ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ և ՁևԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍՆԻԿ ԱԼ-ԽԱԼԻԼ ԻԲՆ ԱՀՄԱԴԻ «ՔԻԹԱԲ ԱԼ-ԱՅՆ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ, Արաբագիտական ուսումնասիրություններ, № 9 ԵՊՀ, 2017, էջ 47-59:
4. ՀԱՐՖԸ ՈՐՊԵՍ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍՆԻԿ ԱԼ-ՄՈՒԲԱՌԱԴԻ «ԱԼ-ՔԱՄԻԼ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ, Բանբեր Երևանի լեզվաբանական համալսարանի, № 1 (42), 2017, էջ 366-371:
5. ՀԱՐՖԸ ՈՐՊԵՍ ՎԱՆԿԱՉԱՓԱԿԱՆ ՄԱՍՆԻԿ ԱԼ-ՄՈՒԲԱՌԱԴԻ «ԱԼ-ՔԱՄԻԼ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ, Բանբեր Երևանի լեզվաբանական համալսարանի, № 1 (42), 2017, էջ 372-377:
6. ԱԼԻՖԻ ԵՎ ՀԱՄՋԱՅԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԳՐԱԿԱՆ ԱՐԱԲԵՐԵՆԻ ՁԵՎԱՀՆՉՅՈՒՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ՝ ԸՍՏ ԱԼ-ԽԱԼԻԼ ԻԲՆ ԱՀՄԱԴԻ «ՔԻԹԱԲ ԱԼ-ԱՅՆ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ, Լրաբեր հասարակական գիտությունների № 1 (652), ՀՀ ԳԱԱ, 2018, էջ 225-230:

© National Library of Armenia

АРУТЮНЯН АЙК ВАЛЕРЬЕВИЧ
КОНЦЕПЦИЯ ХАРФА В АРАБСКОМ ЯЗЫКОЗНАНИИ.
ТИПОЛОГИЧЕСКОЕ И СРАВНИТЕЛЬНОЕ ИССЛЕДОВАНИЕ

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.02 «Общее и сравнительное языкознание».

Защита состоится 29-го июня 2018 г., в 15:00, на заседании специализированного совета 019 ВАК по языкознанию, действующего при Институте языка им. Г. Ачаряна НАН РА, по адресу: 0015, г. Ереван, ул. Григор Лусаворич, 15.

РЕЗЮМЕ

Диссертация посвящена проблеме харфа в арабском языкознании, интерпретации термина в современной лингвистике, места харфа в фонологии арабского языка и тех языков, которые пользуются арабским алфавитом, также в арабской и семитской морфологии. Диссертация основана на анализе использования единицы «харф» в работах трех выдающихся арабских грамматистов – аль-Халила ибн Ахмада, Сибавейхи и аль-Мубаррада.

В диссертации предпринимается попытка показать использование содержания концепции в контексте современной теоретической лингвистики. Во-первых, указывается место харфа в арабской грамматике в качестве как фонетической, так и морфологической единицы. Для этого исследовались те положения, которые содержатся в средневековых арабских источниках. Также показано, какие именно частицы считаются харфами в арабском языке, их количество и роль, которую они играют в арабском языке и в морфологии в частности. С типологической точки зрения рассматриваются также вопросы просодической структуры персидского и османского языков, где указывается роль и место харфа. Также, принимая во внимание грамматические сходства аккадского, древнееврейского и арабского языков, показаны морфологические структуры этих языков, их фонетический и морфонологический состав, проведен сравнительный анализ с арабским.

Данная работа была предпринята для того, чтобы показать какой из двух подходов к термину харф имеет более близкое объяснение концепции. Эта проблема по сей день актуальна не только в арабском, но и во многих других языках. Проблема в том, что существуют три разные единицы фонетического уровня – звуки (греческая метрика), харфы (арабская метрика) и слоги (китайская метрика). Уже было доказано, что в случае слоговых языков звук не может считаться фонемой, а функция формирования приписывается слогу. Таким образом, актуальность концепции харфа выходит за рамки арабского языкознания и относится также к общей лингвистике, так как следует четко определить роль харфа, подтвердить существование трех разных фонологических единиц.

Структура диссертации. Диссертация состоит из введения, двух глав, заключения, приложения и списка использованной литературы.

Во введении рассматриваются узловые вопросы исследования, её структура, цель,

© National Library of Armenia

основные поставленные вопросы, краткий обзор использованной литературы и история изучения вопроса.

Первая глава - *«Фонологическое содержание харфа»,* состоит из четырех частей. В первой части представлено возникновение термина «фонема», его применение в разных языках. Показаны также другие фонологические единицы общей лингвистики, продолжением чего является вторая часть, где описывается фонологическая система арабского языка конкретно. В арабском языке есть своя собственная метрическая система - язык имеет особую фонологическую структуру. Минимальные частицы фонологического уровня – харфы, состоят из одного согласного и одного гласного элементов. В то же время, отсутствие гласного внутри единицы не является основанием для прикрепления этой единицы к предыдущей, к гласному звуку. В отличие от индоевропейской лингвистики, в арабском языкознании неприемлемо согласным и гласным звукам приписывать функцию образования морфемы. Функция этих фонетических единиц посредована в образовании морфемы: она ограничивается образованием харфа, который, в свою очередь, является нечленимой единицей морфемы. Таким образом, граница и уровень наблюдения харфа – это гласный звук «ḥaraka». Харф, как одно целое, приобретает не только просодическое и фонологическое, но также и морфологическое значение. Соответственно, гласный звук не является отдельной фонемой, так как не способен сформировать морфему. В третьей части представлены работы арабских грамматистов,где описаны примеры употребления термина.

Первая глава завершается типологическим анализом содержания харфа в контексте арабского, персидского и османского языков.

Вторая глава – «*Морфологическое содержание харфа*», также делится на четыре части. В первой представлено краткое введение о морфеме, возникновении термина, уникальных подходов представителей разных школ к термину, также его применениие в общей лингвистике. Во второй части представлены особенности арабской морфологии, опираясь на доктрину морфемы. Три части арабской речи – имена, глаголы и частицы,описываются по-отдельности. Задача состоит в том, что нужно показать, где наиболее отчетливо видна именно флективная структура арабского языка. Уточняется также роль и значение харфа в арабском языкознании. Избегая синтаксиса, в диссертации не представлены словосочетания и предложения, лишь примеры тех частиц, которые известны как «харф». В третьей части представлены примеры употребления термина в трудах арабских грамматистов. На примере аккадского и древнееврейского языков стало очевидно, что языковая форма представляет собой единую форму в семитских языках, состоящую из коренных и второстепенных харфов.

В заключении диссертации обобщены и изложены основные результаты работы.

© National Library of Armenia

HAYK HARUTYUNYAN
THE CONCEPT OF HARP IN THE ARABIC LINGUISTICS.
TYPOLOGICAL AND COMPARATIVE STUDY

Dissertation for the degree of candidate of philological sciences, specialty 10.02.02 - "General and Comparative Linguistics".

The defense of the thesis will be held on June 29, 2018, at 15:00, at the Institute of Language after H. Acharyan of National Academy of Sciences, RA (address: 0015 Yerevan, 15 G. Lusavorich St.), Specialized Council on Linguistics 019 HAC (Higher Attestation Commission).

SUMMARY

The thesis is devoted to the problem of harf in the Arabic linguistics, the interpretation of the term in the modern linguistics, the place of harf in the phonology of the Arabic and also the languages, which use the Arabic alphabet, and in Arabic and Semitic morphology as well. The thesis is based on an analysis of the usage of the unit "harf" in the works of three outstanding Arab grammarians - al-Khalil ibn Ahmad, Sibawayhi and al-Mubarrad.

There has been an attempt, made in the thesis, to show the use of the conceptual content in the context of modern theoretical linguistics. First, the place of harf in Arabic grammar is shown as both a phonetic and a morphological unit. For this, the provisions that are contained in medieval Arabic sources have been researched. It is also shown which particles are considered to be called as harf in Arabic, what their quantity is, and what role they particularly play in Arabic and in its morphology. From the typological point of view, the prosodic structure problems of the Persian and Ottoman languages are also considered, where the role and the place of harf is shown. Also, taking into account the grammatical similarities of Akkadian, Hebrew and Arabic, the morphological structures of these languages, their phonetic and morphological structure a comparative analysis with Arabic is shown.

The goal of that is to show which of the two approaches to the term harf has a closer explanation of the concept. This problem is still relevant not only in Arabic, but also in many other languages. There are three different units of the phonetic level - sounds (Greek metrics), harp (Arabic metric) and syllables (Chinese metric). It has already been proved that sounds can not be considered as phonemes in the case of syllabic languages. Its function to form particles of higher level – morphemes, is attributed to the syllable only. Thus, the relevance of the concept of harf is beyond the scope of Arabic linguistics and also relates to general linguistics, it is necessary to define the role of harf clearly, to confirm the existence of three different units of the level of the phonological system.

Dissertation structure. The dissertation consists of an introduction, three chapters, a conclusion, an application and a bibliography.

© National Library of Armenia

The Introduction describes the main issues of the study, explains the goal and objectives of the research, and provides a short discription of bibliography and the history of the topic research.

The First Chapter, entitled "Phonological content of harf", consists of four parts. The first part introduces the emergence of the term "phoneme", its application in different languages. Other phonological units of general linguistics are also shown, the continuation of which is the second part, which describes the phonological system of the Arabic language specifically. In Arabic, there is a proper metric system; therefore the language has a special phonological structure. The minimal particles of the phonological level are harfs; they consist of one consonant and one vowel element. At the same time, the absence of a vowel inside a unit is not the basis for attaching this unit to the previous one, with a vowel sound. Unlike Indo-European linguistics, in the Arabic grammar tradition, it is unacceptably to attribute the consonant and the vowel sounds to the function of morpheme formation. The function of these phonetic units is predetermined in the formation of the morpheme: it is limited to the formation of harf, which is an indistinguishable unit of morpheme. Therefore, the boundary and level of observation of harf is the vowel sound - "ḥaraka". Harf, as a whole, acquires not only prosodic and phonological, but also morphological significance. Accordingly, the vowel sound is not a separate phoneme, as it is not capable of forming a morpheme. The third part contains examples of the use of the term in the works of Arab grammarians.

The first chapter concludes a typological analysis of the contents of harf in the prosodic context of the Arabic, the Persian and the Ottoman languages.

The second chapter, entitled "Morphological content of Harf", is also divided into four parts. The first part contains a brief introduction of the morpheme, the emergence of the term, the unique approaches of different schools' representatives to the term, as well as its application in general linguistics. Taking into account the doctrine of morpheme above, the features of the Arab morphology are shown in the second part. Three parts of Arabic speech - names, verbs and particles, are described here separately. The problem is that it is necessary to show where the inflectional structure of the Arabic language is most clearly visible. The clarification of the role and meaning of harf in the Arabic linguistics is also explained. Avoiding the syntax, the thesis does not contain phrases and sentences, but only examples of those particles that are known as "harf". The third part contains examples of the use of the term in the writings of Arab grammarians.

Using the example of the Akkadian and the Hebrew languages, it becomes obvious that the morpheme-sample is an unbreakable part of the word in the Semitic languages, consisting of harfs – as root or affix parts.

The Conclusion summarizes and presents the main findings of the dissertation.

© National Library of Armenia